

ԹԻՒ 28025  
Յունուար 19, 1988

Արժանաշնորհ  
Տ. Տիրան ԶԻՆՅ. Փախազեան  
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Գլխավէնա.

Սիրելի Տէր Տիրան,

Ժամանակին ստացած ներ Սեպտեմբեր 18, 1982 թուակիր ձեր նամակը՝ էջ-  
միածնէն սկիւ մը ունենալու կապակցութեամբ:

Այս մասին յետաքրքրուեցանք Ս. Էջմիածին գտնուած մեր շրջանին, ~~և և~~  
զը ըստուեցաւ որ մաքսատունը չ'արտօներ նման առարկաներու ~~իչ մաքս~~ ~~և~~ ~~ի~~  
եւթը: Գիտեմք նաեւ որ Դոսթոնէն Տիրա Պշաքեան փորձած է սկիւ մը Երեւան  
ժանիլ որպէս Նուէր Ս. Էջմիածնին՝ սակայն մաքսատունը արգելք հանդիսացած  
է:

Մենք աշխատանք կը տանինք աղանի մը գտարասել տալու համար՝ սրբ յաջո-  
ղինք մեզ տեղեակ կը գտնենք:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը փափարինք յանձնել Տրկ. Գոնտոյեանի  
կողմէ ներկայացուած հարց սր:

Գրասենեակէն մեր բացակայութեան ընթացքին Տրկ. Գոնտոյեան Առաջնորդա-  
րան նկատ է եւ մեր շարտուղարունիին ըստարած է իր այցելութեան նպատակը:  
Կը ներթակենք ջարտուղարունիին մեզի յանձնած "նոր" ին օրինակը:

Այս մասին պիտի ուզէինք բացատրութիւն մը ունենալ: Կարելի է ընթացք  
տալ Տրկ. Գոնտոյեանի խնդրանքին: Հանցցէք մեզ լուսարանել:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔՍՊՈՍԱՌԳՈՍ  
Առաջնորդ

Քիւ 28045  
Յունուար 19, 1988

Ալմանաշնորհ  
Տ. Տիրան ԶԻՆՅ. Օսիպովան  
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Գլխակէնա.

Սիրելի Տէր Տիրան,

Ձանակին ստացած ենք Սեպտեմբեր 18, 1982 թուակիր ձեր նամակը՝ էջ-  
միածնէն սկիւ մը ունենալու կարեկցութեամբ:

Այս մասին հետաքրքրուեցանք Ս. Էջմիածին գտնուած մեր շրջանին, եւ մի-  
զի ըսուեցաւ որ մարտատունը շարժումներ նման առարկաներու վրայ մտադրելի  
եւրբ: Գիտենք նաեւ որ Գոսթոնէն Տիար Պապեան Կորճաօ է սկիւ մը Երեւան  
տանիլ որպէս նուէր Ս. Էջմիածնին՝ սակայն մարտատունը արգելք հանդիսացած  
է:

Մենք աշխատանք կը ասնինք աղանի մը պատրաստել սալու համար՝ սրբ յաշո-  
ղինք ձեզ տեղեակ կը պահենք:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը փոխարինք յանձնել Տիկ. Գոստայեանի  
կողմէ ներկայացուած նարք մը:

Գրասենեակէն մեր բացակայութեան ընթացքին Տիկ. Գոստայեան Առաջնորդա-  
րան եկած է եւ մեր քարտուղարուհին քատարած է իր այցելութեան նպատակը:  
Կը ներփակենք քարտուղարուհին մեզի յանձնած "նոթ" ըն օրինակը:

Այս մասին պիտի ուզէինք բացատրութիւն մը ունենալ: Կարելի է ընթացք  
սալ Տիկ. Գոստայեանի խնդրանքին: Հանցե՞ք մեզ լուսարանել:

Սիրով ողջունելու

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

SERPAZAN HAYR:

Mrs. A. Condoyan  
34-39 82nd Street  
Jackson Heights, N.Y.

wanted to see you when you were in Tenafly  
on November 10, 1982.

She said that she had given \$500 for a  
painting in memory of her husband to the  
St. Gregory of Narek Armenian Church of  
Cleveland.

However, there is no mention on the  
painting that this was given by her in  
memory of her husband but that Paul Apkarian  
had painted it. She said that she asked  
several times Father Diran but without any  
results.

She wanted a plaque made and put under the  
painting as

given in memory of John Condoyan  
by his wife and daughter  
Armenouhi and Spring Condoyan

She also brought some free tickets for  
the Metropolitan Museum in case any of the  
clergy wanted to visit the Museum

ST

November 11, 1982

April 2, 1985

The Rev. Fr. Diran Papazian, Pastor  
St. Gregory of Narek Armenian Church  
666 Richmond Road  
Cleveland, Ohio 44143

Dear Fr. Diran;

H.E. Archbishop Torkom Manoogian approved your 1984 annual parish report, and enclosed is his letter of confirmation.

Please note that the invitation to the assembly was undated, and a separate message by the chairman was not necessary. Also, samples of the ballots should have been included in the report.

Thank you for submitting otherwise a complete report.

Sincerely,

Mesrob M. Kermian  
Director



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28986  
Ապրիլ 2, 1985

Արժանաշնորհ  
Տ. Տիրան Ա. Քհնյ. Փափագեան  
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Նախագահ Ժխական Խորհուրդի  
Գլխավորնտ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Մարտ 18, 1985 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 24ին զուարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ճանէթ Եոլ  
Նազ Եսայեան  
Սամ Միրաբեան

Քիւ 29188  
Յունուար 17, 1986

Հոգեշնորհ  
Տ. Դարենիկ Քհնյ. Գոնարալեան  
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Գլխավորնա.

Սիրելի Տէր Դարենիկ,

Ասացած ենք Դեկտեմբեր 21, 1985 թուակիր ձեր նամակը:

Սեպտեմբեր 12-14, 1986, թուականը վերապահած ենք Գլխավորնաի Ս. Գրի-  
գոր Նարեկացի Եկեղեցւոյ մեր համայնքի այցելութեան:

Բարի եղէք ժամանակին մեզի տեղեկացնել մեր այցելութեան կապակցու-  
թեամբ ձրական խորհուրդիդ կարգադրութեանց մասին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH

666 Richmond Road  
Cleveland, Ohio  
44143. U.S.A.

Area Code 216—Tel. 381-6590

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
Գլխավոր, Օհայո

December 21, 1985


His Eminence Archbishop Torkom Manoogian  
Diocese of the Armenian Church of America  
630 Second Avenue  
New York, New York 10016-4885

Your Eminence:

✓ In regard to our telephone conversation last week, this is to confirm your visit to St. Gregory of Narek, Cleveland Parish on September 12, 13 and 14, 1986 at the Feast of the Exaltation of the Holy Cross. Please mark your calendar and make the proper plans accordingly.


We will be in touch with you at a later date concerning full details of your trip.

Respectfully yours,



Fr. Terenig Kondralian

TK/hc



April 2, 1986

Rev. Fr. Terenig Kondralian, Pastor  
St. Gregory of Narek Armenian Church  
666 Richmond Rd.  
Richmond Heights, OH 44143

Dear Father Terenig:

Your 1985 annual report has been approved by H.E. Abp. Torkom Manoogian, as stated in the enclosed letter, but please note that the sample ballot was missing in the documents you have sent us.

Thank you for your cooperation.

Very truly yours,

Michael M. Kermian  
Director





# ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՍ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29262  
Ապրիլ 3, 1986

Արժանաշնորհ  
Տ. Դերենիկ Քհնյ. Գոնտրալեան  
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական խորհուրդի  
Գլխավորնս.

Սիրելի Տէր Դերենիկ,

Ստացած ենք Մարտ 24, 1986 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 28ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական խորհուրդի նորընտիր ղեկանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Գրիգոր Ղազարեան  
Արմէն Արսլանեան  
Հարրի Քանանեան  
Հելէն Աթրեան



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30526

Սեպտեմբեր 12, 1988

Ազնուաիայի  
Տիկին Ճլարընս Գարոլյանեան  
Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցույ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Գլխվորնու.

Ազնի Տիկին Գարոլյանեան,

Ստացած ենք Օգոստոս 18, 1988 թուակիր ձեր նամակը:

Առանձին նամակով մը, որուն օրինակը կը ներիակենք, տեղեկացուցած ենք Սերոբ Սրկ. Տէմիրճեանին որ ինչպիսի կրօնական արարողութիւններ կրնայ կատարել եկեղեցույ մէջ:

Այսուհետեւ Սերոբ Սարկաւազն է որ պիտի հոգայ համայնքիդ հաւատացեալներու հոգեւոր կարիքները՝ ցնոր տնօրինութիւն:

Զեզի եւ Ծխական Խորհուրդի անդամներուն կը մաղթենք առաւել քաջառողջութիւն եւ եկեղեցանուէր ձեր աշխատանքներուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30525

Սեպտեմբեր 12, 1988

Բարեջանոր՝  
Սերոբ Սրկ. Տեմիրճեան  
Պէյ Վիլլէն.

Բարեջանոր՝ Սերոբ Սարկաւագ,

Նկատի ունենալով որ Գլխվրձնտ Օնայոյի Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցին մնայուն Հոգեւոր Հովիտ չունի, այսու գիրով արտօնութիւն կը շնորհենք ձեզի որ հետեւեալ կրօնական արարողութիւնները կատարէք եւ հաւատացեալներու հոգեւոր կարիքը մատակարարէք, որքան ժամանակ որ մեր Աջանակած պաշտօնին մէջ կը ծառայէք:

- 1.- Կատարել Հայց. Եկեղեցւոյ բոլոր ժամերգութիւնները, բացի այն մասերէն որ ձեռնադրեալ եւ օծեալ քահանայի մը ներկայութիւնը անհրաժեշտ է: Օրինակ, ժողովուրդը օրհնել, «Խաղաղութիւն Ամենեցուն» ըսել եւ ժողովուրդին վրայ խաչակնքել:
- 2.- Հոգեհանգստեան Կարգ կատարել, նոյն հասկացողութեամբ:
- 3.- Սուրբ Պատարագի ընթացքին սրբագործուած եւ ապա սրբատուփին մէջ պահուած Սուրբ Հաղորդութենէն մատակարարել հիւանդներուն՝ տուներու եւ հիւանդանոցներու մէջ:
- 4.- Խոստովանանքի համար գործածել հաւաքական խոստովանանքի բանաձեւը, առանց վերջին տունին, այսինքն «Հայր Սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան եւ բարեխօս ...»: Նաեւ առանց «Տղորմեսցի քեզ մարդասէրն Աստուած ...» արձակումի բանաձեւը արտասանելու: Ասոնց փոխարէն կարդալ Սարկաւագի քարոզը՝ «Եկեալքս ի խոստովանութիւն ապաշխարութեան՝ հաւատով գոյս միածնի Որդւոյն Աստուծոյ դիցուք ի սիրտս մեր ...», որ կը գտնուի «Առաւօտեան Ժամերգութեան » վերջաւորութեան՝ «Բանից իմոց ունի դիր, Տէր ...» սաղմուէն առաջ: Այս քարոզը կարելի է գտնել Երուսաղէմ տպուած, 1947, գրպանի փոքրիկ ժամագիրքի 307-308 էջերուն վրայ:

5.- Հասկանալի պետք է ըլլայ որ արտօնուած չէք կատարել այն խորհուրդները կամ արարողութիւնները՝ որոնք ձեռնադրուած եւ օծուած քահանային յատուկ են, այսինքն Մկրտութիւն, Դրոշմ, Արձակում, Ս. Պատարագի մատուցում, Պսակ Ամուսնութեան: Ինչպէս նաեւ որեւէ արարողութիւն՝ որ առարկայ մը օրհնելու կամ Միտոնով օծելու անհրաժեշտութիւն կայ: Օրհնակ՝ ջուր օրհնել, տուն օրհնել, Թաղման Կարգին մէջ՝ հող օրհնել, գերեզման կնքել, «Անդաստան» կատարելով «օրհնել», Զրօրհնէքի ատեն ջուրը օրհնել եւ Միտոն կաթեցնել, եւ այլն: Բայց կարելի է Հայրապետական Մաղթանք եւ Դոնբացէքի ու Խաւարման Գիշերի Կարգը կատարել:

Սոյն հրահանգը կը յանձնենք ձեր ուշադրութեան՝ ի գործադրութիւն:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Օրհնակ՝ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետին



August 18, 1988

His Eminence Archbishop Torkom Manoogian, Primate  
Diocese of the Armenian Church of America  
630 Second Avenue  
New York, NY 10016

Your Grace:

Pursuant to your recent visitation to the St. Gregory of Narek Armenian Church of Cleveland, please let this letter serve as our formal request for Your Grace to grant special permission to Deacons Serop Demirjian and Michael Ohanesian to administer COMMUNION and REQUIEM SERVICE.

It is our understanding that once the permission is granted, you will communicate directly with Deacons Serop and Michael to discuss with them under what conditions they may administer COMMUNION and REQUIEM SERVICE.

Their respective addresses are:

Deacon Serop Demirjian  
540 Sandalwood  
Bay Village, OH 44140  
216-331-1668

Deacon Michael Ohanesian  
18551 Snow  
Dearborn, MI 48124  
~~313-336-7836~~

We look forward to your prompt and courteous response in this matter, Srpazan Hayr.

Respectfully yours,

*Florence Karoghlanian*

Florence Karoghlanian  
Chairman  
Parish Council

FTK/mtk

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH  
678 Richmond Road  
Richmond Heights, Ohio 44143  
(216) 381-6590